«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ներառական կրթություն

ԱՌԱՐԿԱ Մաթեմատիկա

ՀԵՂԻՆԱԿ Անահիտ Մալխասյան

ՄԱՐԶ Արագածոտնի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ծիլքարի Խ.Ասլանյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

Արվեստի մեջ փայլատակում է տաղանդավորը՝ կրթության մեջ ինքնակրթությամբ զբաղվողը:

Բովանդակություն

Ներածություն ---------- 4

Հասկացություն ներառական կրթության մասին ---------- 5-8

Ներառական կրթությունը մարդու իրավունքների տեսանկյունից---------- 9

«Կրթությունը բոլորի համար» շարժումը ---------- 10-11

Ներառական կրթությունը և կրթական հատուկ կարիքների սոցիալական մոդելները--- 12

Բարեփոխումներ ներառական կրթության ուղղությամբ ---------- 13

Ներառական կրթության իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում ---------- 14-16

Եզրակացություն ---------- 17-19

Օգտագործված գրականության ցանկ ---------- 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթության գաղափարի երաշխիքը մարդու կրթական իրավունքն է: Այն հիմք է ավելի արդար հասարակության կառուցման: Այդ իրավունքը իրականացնելու նպատակով **«Կրթություն բոլորի համար»** շարժումը նախաձեռնել է ամեն հնարավորը, հիմնական կրթությունը բոլորի համար մատչելի դարձնելու:

Ներառական կրթությունը՝ որպես ներառական քաղաքականության բաղկացուցիչ, հնարավորություն է տալիս երեխաներին սովորելու իրենց համայնքներում գտնվող դպրոցներում:

Ներառական կրթությունը հոգ է տանում բոլոր սովորողների մասին, հատկապես նրանց, ովքեր հաճախ զրկված են սովորելու հնարավորությունից՝ նկատի ունենալով հատուկ կարիքներով սովորողներին, հաշմանդամներին, էթնիկ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին և այլոց:

Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս դպրոցներին ծառայել բոլոր երեխաներին: Ներառական կրթությունը ենթադրում է դպրոցներ, որոնք ուսուցման գործընթացում կներգրավեն բոլոր սովորողներին՝ անկախ նրանց ունեցած ֆիզիկական տվյալներից, որոնք հետագայում հաշվի կնստեն սովորողների բազմազանության հետ, քան թե կխուսափում դրանից:

Ներառական կրթությունը նկատի ունի նաև կրթական համակարգում ավելի լայն հնարավորություններով այնպիսի դպրոցների ստեղծում, որոնք իրենց բնույթով ներառական են, և որոնք օգտագործվում են համայնքների բոլոր ռեսուրսները՝ իրենց իսկ սովորողների հիմնախնդիրը առավել արդյունավետ լուծելու համար:

Հասկացություն ներառական կրթության մասին

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների՝ այդ թվում նաև կրթության հատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող, կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակույթային ու համայնքային կյանքին: Այն ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության մեջ, մոտեցումներում, կառույցներում և մեթոդներում, տարածվում է համապատասխան տարիքային խմբի բոլոր երեխաների վրա: Ներառական կրթությունը հենված է այն համոզմունքի վրա, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է:

Ներառումը ծագում է հատուկ կրթությունից: Հատուկ կրթությունը զարգացել է մի շարք փուլերով, որոնց ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամ երեխաների և սովորելու դժվարություններ ունեցող աշակերտների կարիքների բավարարման տարբեր ուղիներ: Երբեմն հատուկ կրթությունը լրացրել է հանրակրթությանը, սակայն՝ առանձնացված:

Ներկայումս կիրառվող մեթոդներն ու ծրագրերն ի վիճակի չեն բավարարելու մեկուսացման ենթարկված երեխաների ու դեռահասների կարիքները: Անցյալում այդ նպատակով դիմում էին հատուկ ծրագրերի, հաստատությունների ու մասնագետ մանկավարժների օգնությանը: Լավագույն նկատառումներով իրականացվող նման տարբերակման հետևանքը հաճախ լինում էր բացառում:

Կրթությունը պետք է համարվի անձի զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից: Ուստի, ոչինչ չպետք է արգելք հանդիսանա մարդուն կրթություն ստանալու համար: Այսպիսով, համընդհանուր ներառումը ենթադրում է մի գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին՝ ներառյալ նրանց, ովքեր ենթակա են մեկուսացման և բացառման:

Առանձնացված հատուկ դպրոցներում երեխաներին ուսուցանելը հակասում է տան, ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Չնայած հատուկ դպրոցների որոշ կրթական առավելությունների՝ կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը ընտանիքից ու տնից հաճախ խոսում է հասարակության մեջ այդպիսի մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարմունքների մասին:

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ երեխաները տարբեր են, և դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների անհատական պահանջմունքներին:

Սակայն, ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես, երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման ընթացքին համապատասխանող տարբեր մեթոդների գործադրում:

Հատուկ կարիքներ ունեցող երեխաների ընդգրկումը հանրակրթական դպրոցներ կօգնի ուսուցիչներին կիրառել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված մեթոդներ ուսումնական գործընթացում:

Կրթական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է բոլոր աշակերտների ակտիվության բարձրացմանը: Անհրաժեշտություն կառաջանա հատուկ տեխնիկական օժանդակության և երեխայի զարգացման կոնկրետ խանգարումներով պայմանավորված սարքավորումների գործադրման: Այս գործունեության դրական արդյունք կարող է հանդիսանալ դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները: Չի կարելի ժխտել, որ ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթական որակը բոլորի համար:

Հասարակության մեջ հատուկ պայմանների կարիք ունեցողների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են՝ տեղեկատվության և այն մարդկանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է: Փորձը ցույց է տալիս, որ համապատասխան բարենպաստ մթնոլորտում երեխաներն առավել հանդուրժող են, քան մեծահասակները: Միևնույն դպրոցում կրթական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպումը կձևավորի անկանխակալ վերաբերմունք նրանց նկատմամբ: Կրթական հատուկ պայմանների կարիք չունեցող երեխաները օգուտ կստանան այդպիսի շփումից: Դեռևս վաղ հասակից նրանք կսովորեն ավելի հանդուրժող լինել կրթական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանդեպ, որի արդյունքում կբարձրանա նրանց սոցիալական պատասխանատվությունը: Արդյունքում ապագա քաղաքացիների մոտ կարմատավորվի

այն բանի գիտակցումը, որ հատուկ պայմանների կարիք ունեցող մարդիկ ևս հասարակության լիիրավ անդամներ են: **Ներառական կրթությունը կօգնի հաղթահարելու խտրականությունը:**

Հաշմանդամությունն ու աղքատությունը սերտորեն փոխկապակցված են: Աղքատ երեխան առավել պասիվ է, դժվար է նրանից ակնկալել ակտիվ միջամտություն և աջակցություն հասարակական որևէ գործընթացին: Հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքները, ինչպես նաև հաշվանդամություն ունեցող երեխան ավելի հաճախ են լինում մեկուսացած հասարակությունից: Այս պարագայում համընդհանուր ներառումը կարող է տալ գործնական հմտություններ և գիտելիքներ՝ արատավոր երևույթները հաղթահարելու համար:

Հատուկ կարիքներով, ինչպես նաև աղքատ ընտանիքների երեխաներին ու մեծահասակներին ներառական կրթությունը հնարավորություն է տալիս դիմակայելու նախապաշարումներին, օգնում է նրանց դուրս գալու ավելի ինքնավստահ, կառուցել սեփական ապագան առանց այլոց օժանդակության և դառնալ հասարակության լիիրավ անդամ:

Ներառական կրթությունը արտացոլում է երկու ուղղություն.

1. Աջակցություն նպատակային այնպիսի նախաձեռնություններին, որոնք միտված են հատուկ կարիքներ ունեցող երեխաների և նրանց ընտանիքների ներուժը ուղղորդելու և իրացնելու նպատակով ծավալվող գործունեության խթանմանը, հասարակական կյանքին նրանց լիիրավ մասնակցությանը, իրավունքների պաշտպանությանը:
2. Մարտահրավեր է նետում հատուկ կարիքներ ունեցող մարդկանց նկատմամբ ձևավորված վերաբերմունքին, օգնում ծնողներին հասկանալ իրենց երեխաների խնդիրները և կարիքները, նպաստել նրանց լիարժեք ներգրավվածությունը հասարակության մեջ:

Ներառական կրթությունը բացառում է երեխաների ցանկացած խտրականություն, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, ստեղծում է հատուկ պայմաններ հատուկ պահանջմունքներ ունեցող երեխաների համար:

Ներառական կրթությունն ընդհանուր կրթական զարգացման գործընթաց է, որը ենթադրում է բոլորի համար կրթության մատչելիություն՝ երեխաների տարբեր կարիքներին հարմարվելու առումով, ինչն ապահովում է սահմանափակ սոցիալական հնարավորություններ ունեցող երեխաների համար կրթության մատչելիություն: Ներառական կրթությունը որդեգրում է երեխայակենտրոն մեթոդաբանություն, համաձայն որի բոլոր երեխաները ուսուցման տարբեր պահանջմունքներով անհատականություններ են: Ներառական կրթությունը ուսուցման ոլորտում ջանում է մշակել

այնպիսի մոտեցումներ, որոնք տարատեսակ պահանջմունքներ բավարարելու հարցում կլինեն առավել ճկուն: Եթե ներառական կրթության ներդրած փոփոխությունների արդյունքում դասավանդումն ու ուսուցումն ավելի արդյունավետ դառնան, ապա կշահեն բոլոր երեխաները:

Ուսուցումը ներառական դպրոցում հնարավորություն է տալիս երեխաներին ձեռք բերելու անձնական կենսափորձի վրա հենված գիտելիքներ մարդու իրավունքների մասին, ինչը հանգեցնում է խտրական դրսևորումների նվազեցման, քանի որ երեխաները սովորում են ճիշտ հարաբերվել իրար հետ, ճանաչել և ընդունել միմյանց տարբերությունները:

Ներառական կրթությունը նաև դինամիկ և զարգացող գործընթաց է: Այն ենթադրում է բազմազանություններին արձագանքելու այնպիսի արդյունավետ ձևերի որոնում, որոնք հնարավորություն կտան անընդհատ դիտարկումների և վերլուծությունների միջոցով ճիշտ գնահատել սովորողների կարիքները՝ ստեղծված իրադրություններում կողմորոշվելու և համարժեք քայլեր ձեռնարկելու համար:

Ներառական կրթությունը մարդու իրավունքների տեսանկյունից

Ներառական կրթության հիմքում ընկած է այն դրույթը, որ կրթությունը հանդիսանում է ինչպես անհատի, այնպես էլ հասարակության զարգացման հիմքն է: Ներառական կրթությունը ոչ միայն որոշակի մակարդակի գիտելիքներ ստանալու միջոց է, այլև սոցիալական և անհատական զարգացմանը նպաստող հիմնական միջոց, որը կտանի աղքատության, խտրականության, տգիտության, մարդկանց կեղեքման մակարդակի կրճատման, պատերազմների կանխման:

Արտահայտված հայեցակետը նշանակում է, որ կրթությունը չպետք է դիտվի որպես ընտրյալի մենաշնորհ, այլ որպես յուրաքանչյուր մարդու իրավունք: **«Մարդու Իրավունքների Դեկլարացիան»** հաստատեց դրույթը, համաձայն որի կրթությունը մարդու հիմնական իրավունքն է: Իրավունքը, որը հետագայում ամրագրեց Միավորված Ազգերի Երեխայի Իրավունքի վերաբերյալ 28 Կոնվեկցիայով: Նրանում մասնավորապես նշում է, որ

Պետական Կառույցները ընդունում են երեխայի կրթական իրավունքը, և այդ իրավունքի առավել արագ կյանքի կոչման համար նրանք պատրաստվում են.

- Տարրական կրթությունը դարձնել մատչելի և պարտադիր բոլորի համար:
- Խրախուսել միջնակարգ կրթության զանազան ձևերը՝ ներառյալ հիմնական և մասնագիտական՝ դարձնել դրանք մատչելի յուրաքանչյուր երեխայի համար՝ ազատ կրթություն ստանալու հնարավորություններ տրամադրելու և անհրաժեշտության դեպքում ֆինանսապես աջակցելու ճանապարհով:
- Ձեռնարկել քայլեր սովորողների կանոնավոր հաճախումների համար և նվազեցնել դասալքումների քանակը:

Ներառական կրթություն ստանալու ճանապարհին առկա են երեք հիմնական խոչընդոտներ.

1. Կրթության հնարավորությունները սահմանափակված են մեծ թվով մարդկանց համար: Նրանք կամ մերժում են սովորելու հնարավորության մեջ, կամ նրանց տրված են սահմանափակ հնարավորություններ:
2. Հիմանական կրթությունը դիտվում է որպես գիտության ձեռքբերում, այլ ոչ թե որպես հիմք՝ քաղաքացիական կյանքին նախապատրաստվելու համար:
3. Որոշակի խոցելի խմբեր կրթություն ստանալու հնարավորությունից զուրկ լինելու պատճառով հայտնվում են ռիսկի խմբերում:

«Կրթությունը բոլորի համար» շարժումը

Ներառական կրթություն ստանալու համար պետք է հետապնդվի հետևյալ նպատակը.

Բավարարելու բոլոր երեխաների, երիտասարդության և մեծահասակների պահանջները՝ ստանալու ընդհանուր կրթություն, և կանխել կրթության համակարգում վերջին տարիների ընթացքում շատ երկրներում նկատվող անկումը:

Գործնականում անհրաժեշտ է «ընդլայնված մոտեցում»:

Ժոմտյենյան դեկլարալացիան շարադրում է «ընդլայնված մոտեցում» հիմնական բաղադրիչները.

- Միանման մոտեցում բոլոր երեխաների, երիտասարդների,մեծահասակների նկատմամբ և անկողմնապահ վերաբերմունք բոլորի հանդեպ: Սրա երաշխիքը կլինի այն, որ կրթությունը լինի մատչելի, օրինակ, իգական սեռի ներկայացուցիչների և այլ խոցելի խմբերի անձանց համար:
- Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն սևեռել ոչ միայն ուսումնական հաստատությունները հաճախելու փաստի վրա, այլև սովորողների առաջադիմության գնահատման վրա:
- Ընդլայնել հանրակրթական համակարգի հնարավորությունները՝ ոչ միայն ապահովելով ընդհանուր տարրական կրթություն, այլև ներգրավել այդ աշխատանքում ընտանիքներին, համայնքին, վաղ մանկական հասակի երեխաների խնամակալների, գրադարանների, զանգվածային լրատվության միջոցներին և հասարակական կառույցներին իրագործել գրագիտության բարձրացման, ինչպես նաև ոչ ձևական ուսուցման ծրագրեր:
- Ստեղծել սովորողների համար արդյունավետ պայմաններ՝ ապահովելով նրանց սննդով, հոգալ նրանց առողջության մասին, ֆիզիկապես և հոգեպես նեցուկ լինել նրանց, այսինքն՝ ապահովել այն ամենը, ինչի կարիքը նրանք կարող են ունենալ ուսունցման ընթացքում:
- Համագործակցության հաստատում կրթության բոլոր ձևերի և կառույցների, կառավարման դեպարտամենտների, ոչ կառավարական կազմակերպությունների, մասնավոր սեկտորի, կրոնական խմբերի, տեղական համայնքների և ամենից առաջ՝ ընտանիքների ու ուսուցիչների միջև:

Այլ կերպ ասած, տալ ընդհանուր կրթություն չի նշանակում դպրոցները դարձնել մատչելի միայն նրանց համար, ովքեր այս կամ այն կերպ ունեն հնարավորություն սովորելու, այլ ցուցաբերել ակտիվություն՝ կրթություն ստանալու ճանապարհին բոլոր սովորողների առաջ ծագած անսպասելի խոչընդոտները բացահայտելու և հաղթահարելու հարցում:

Քսանմեկերորդ դարի կրթության վերաբերյալ Միջազգային հանձնաժողովի զեկույցին համաձայն հաստատվեց, որ **կրթությունը մարդու հիմնական իրավունքն է: Այն հանդիսանում է աշխարհի զարգացման և, ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրների միջև կայունության հիմք,և այդ պատճառով**

էլ ներկայացնում է քսանմեկերորդ դարի տնտեսության մեջ արդյունավետ մասնակցության անհրաժեշտ պայման:

Ներառական ուսուցման զարգացման գործում մեծ քայլ կատարվեց կրթական հատուկ կարիքներին նվիրված համաշխարհային համաժողովում: «Կրթություն բոլորի համար» ծրագրի հետագա զարգացման նպատակով 92 երկրների կառավարությունների ավելի քան 300 մասնակիցներ հանդիպեցին Սալամանկայում: Նրանց խնդիրն էր քննարկման միջոցով ներառական կրթությանը հասնելու համար անհրաժեշտ փոփոխությունների հիմնական քաղաքականության մշակումը, այն է՝ դպրոցների համար այնպիսի հնարավորությունների ապահովումը, որը թույլ կտա դպրոց ընդունել բոլոր երեխաներին և առաջին հերթին նրանց, ովքեր ունեն կրթական հատուկ կարիքներ:

Սալամանկայի համաժողովը, բախվեց մի հիմնախնդրի հետ, որի լուծումից «Կրթությունը բոլորի համար» ծրագիրը տակավին հեռու էր, և որն առաջանում էր կրթական հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խմբերի ուսուցումը կազմակերպելիս: Այդ հիմնախնդիրները չէին կարող լուծել տիրող քաղաքականության հենքի վրա, առկա պատնեշները չէին կարող վերանալ միայն կրթության հատուկ կարիքներով երեխաների համար առանձին կրթական համակարգերի և դպրոցների զարգացմամբ: Անհրաժեշտ էր որակապես նոր՝ ընդհանրական մոտեցում՝ բոլոր սովորողների կարիքներին համապատասխան: Եվ ինչպես փաստագրեց հանձնաժողովը, յուրաքանչյուր երեխա եզակի է բնավորությամբ, հետաքրքրասիրություններով և ունի կրթական տարբեր խնդիրներ: Ուստի, եթե կրթության իրավունքն ունի ուժ, ապա կրթական համակարգերը և կրթական ծրագրերը պետք է ուրվագծվեն և կյանքի կոչվեն այդ բազմազան կարիքները և կրթական ծրագրերը պետք է ուրվագծվեն և կյանքի կառչվեն այդ բազմազան կարիքները և բնութագրերը հաշվի առնելով: Սա դրույթ է ներառական կրթության զարգացման վերաբերյալ: Սակայն, դա կարող է իրագործվել միայն սովորսկսն դպրոցների՝ ներառական հուն մտնելու պայմանի դեպքում:

Ներառական կրթությունը և կրթական հատուկ կարիքների սոցիալական մոդելները

Ներառական կրթությունը կրթական դժվարությունների հաղթահարման գործընթացը դիտարկում է հատուկ կարիքների սոցիալական մոդելի համատեքստում: Հատուկ կարիքներով երեխաները նույնպես ունեն դժվարություններ ուսումնառության ընթացքում: Նրանք կարող են չհասկանալ բանավոր կամ գրավոր հրահանգը, կամ էլ ի վիճակի չլինել ինքնուրույն հասնելու դպրոց: Բայց ներառական ուսուցման գաղափարը ենթադրում է, որ թվարկված դժվարությունները չեն կարող պայմանավորված լինել սոսկ արատներով: Հակառակը, դրանք կրթական համակարգի բացթողումներն են, որոնք պայմանավորված են վատ մշակված ուսումնական պլանների, վատ պատրաստված ուսուցիչների, վատ հրահանգների, սարքավորումներով չապահովված դպրոցների և այլնի առկայությամբ: Այս ամենը բերում է արհեստական խոչընդոտների, դժվարությունների առաջացման:

Բարեփոխումներ ներառական կրթության ուղղությամբ

Ներառական ուսուցման ներմուծման հարցը բավական լուրջ քայլ է: Շատ երկրներ սկսեցին վերափոխել իրենց կրթական համակարգերը: Նրանք սկսեցին ընդհանուր հանրակրթական դպրոցում սովորող երեխաների շրջանակը ընդլայնելուց: Կրթությունը կազմակերպեցին այնպես, որ հաշմանդամ երեխաները սովորեն առողջ երեխաների հետ միասին:

Ներառական կրթության իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունը միանալով ներառական կրթությանը վերաբերվող միջազգային շատ դեկլարացիաների և իրավական փաստաթղթերի, կատարել է համապատասխան օրենսդրական փոփոխություններ և ընդունել մի շարք նորանոր օրենքներ:

- «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթական համակարգի բարեփոխուներին: Օրենքում ամրագրված է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացնել ինչպես հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով»:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիման վրա:

- Հատուկ կրթության կարիք ունեցող երեխաները կարող են օգտվել հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատությունից.
- Երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրան առանձնացման:

Հատուկ հաստատությունների համակարգի բարեփոխումները նպատակ ունեն.

- կատարելագործելու կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության և խնամքի համակարգերը.
- նպաստելու գիշերօթիկ հաստատություններից երեխաներին ընտանիքներ վերադարձնելուն.
- կանխարգելելու հատուկ հաստատություններում ընդգրկված երեխաների թվի աճը:

Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ուղղություններն են.

- հատուկ հաստատությունների համակարգի կառուցվածքային բարեփոխումներ.
- հատուկ հաստատությունների ղեկավարման և ֆինանսավորման մեխանիզմների բարեփոխում.
- հատուկ հաստատություններում իրականացվող ծառայությունների ապակենտրոնացում.
- հատուկ հաստատություններում երեխաների կրթական և խնամքի որակի բարելավում.
- հատուկ հաստատություններում ընդունելության համակարգի կատարելագործում:

Այս ուղղությունների իրականացման նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր, փոփոխություններ են առաջարկել «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում, ընդունվել է նաև «Կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող երեխաների կրթության մասին» ՀՀ օրենքը, որտեղ

- սահմանված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կատեգորիաները, որտեղ չկան նախկինում ամրագրված որբ, ծնողական խնամքից զրկված երեխաների և արտակարգ ունակություններ ցուցաբերված երեխաների կատեգորիաները.
- ամրագրված է, որ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը վկայագրում է տարածքային կառավարման լիազոր մարմինը.
- ամրագրված է «համընդհանուր ներառում» հասկացությունը.
- ներառական կրթությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրա համատեղ ուսուցումն է իր հասակակիցների հետ համատեղ՝ հանրակրթական դպրոցում: Նշված դրույթն ամրագրված «Կրթության մասին» ՀՀ օրենքում: «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրով»:

Ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է, որը հենվում է յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների գնահատման և կրթության պրոցեսին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման պահանջի վրա: Ներառական կրթության իրականացման ճանապարհին կարևորվում է բազմամասնագիտական թիմի ստեղծումը, որի մեջ ներգրավվում են երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետներ (ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ), երեխայի ծնողը և համակարգողը: Թիմը գնահատում է յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները, հայտնաբերում է նրա առողջապահական և սոցիալական այն կարիքները, որոնք ուղղակի ազդեցություն ունեն երեխայի կրթության վրա: Մշակվում է երեխայի ուսուցման անհատական պլան՝ ուղղված կարիքի բավարարմանը: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխայի կրթությունը կազմակերպել հասակակիցների հետ համատեղ հանրակրթական դասարանում՝ անհատական պլանով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ծրագրով:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.08.2003թ. N593-Ն (Ք) հրամանով հաստատվել են կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների բժշկահոգեբանամանկավարժական (ԲՀՄ) գնահատման չափանիշները:

Եզրակացություն

Վերը նշվածից գալիս ենք այն եզրակացության, որ ներառական կրթությունը.

- հաստատում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել.
- ընդունում և հարգում է երեխայի տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, զարգացման խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն.
- նպաստում է երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպմանը.
- նպաստում է ներառական հասարակության կառուցման հեռահար ռազմավարական գաղափարի իրականացումը.
- դինամիկ և զարգացող գործընթաց է:

Կրթության մեջ ներառումը ենթադրում է

- բոլոր աշակերտների կրթական կարիքների հավասար գնահատում
- ուսումնական, մշակույթային, համայնքայի միջոցառումներին աշակերտների ներգրավվածության աստիճանի բարձրացում
- դպրոցների վարած քաղաքականության վերակառուցումն ու դրա համապատասխանացում աշակերտների բազմազանությանը և առանձնահատկություններին
- ուսուցման ոլորտում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում (չսահմանափակվելով միայն հաշմանդամներով և կրթական հատուկ պահանջներ ունեցողներով)
- խոչընդոտները հաղթահարելու փորձի ձեռք բերում, որը կոչված է ապահովելու որոշակի աշակերտների մասնակցությունն ուսումնական գործընթացին՝ աշակերտների համար ավելի մեծ փոփոխությունների ակնկալիքներով http://www.cfep.am/files/legislation/486.doc
- սեփական համայնքում կրթություն ստանալու աշակերտների իրավունքի ապահովում
- ինչպես դպրոցի աշխատակազմի, այնպես էլ աշակերտների համար ուսումնական պայմանների բարելավում
- արժեքների ձևավորման ու զարգացման, ինչպես նաև նվաճումների մեծացման գործում դպրոցների դերի կարևորում http://www.cfep.am/files/legislation/486.doc

- կրթությունը՝ որպես հասարակության մեջ մարդու լիարժեք ներառման ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

Ներառական կրթության զարգացման գործում դպրոցները պարտավոր են ***ընդունել բոլոր երեխաներին՝ անկախ նրա ֆիզիկական, մտավոր ունակություններից, սոցիալական, հուզական, լեզվական և այլ առանձնահատկություններից: Դպրոցը պետք է ընդունի հաշմանդամներին և օժտվածներին, փողոցի երեպաներին և աշխատող երեխաներին, հեռավոր բնակավայրերի և քոչվորների երեխաներին, ազգային էթնիկ կամ մշակույթային փոքրամասնություններին պատկանող երեխաներին և այլ ռիսկային խմբերին ու շրջանակներին պատկանող երեխաներին:***

Այն ապահովում է բոլոր երեխաների արդյունավետ ուսուցումը և լուծում է նաև կրթական համակարգի ֆինանսավորման հարցը: Ներառական դպրոցների ստեղծումը շահեկան է հետևյալ պատճառներով.

<u>Կրթության տեսանկյունից:</u> Բոլոր երեխաների համատեղ ուսուցման պահանջը մղում է ուսուցման նոր ուղիների որոնման, որոնք կհամապատասխանեն բոլոր երեխաների պահանջներին՝ անկախ առանձնահատկությունից և դրանցով պայմանավորված հիմնախնդիրներից:

<u>Այն շահեկան է նաև սոցիալական առումով:</u> Մնանատիպ ինտեգրված դպրոցներն ունակ են հասարակության վերաբերմունքը սոցիալական անհավասարության և խտրականության հանդեպ, բոլոր երեխաներին միասին ուսուցանելու ճանապարհով նրանք կորող են ձևավորել արդար, խտրականությունից զուրկ հասարակության ստեղծման հիմքը:

Ներառական դպրոցների ստեղծումը ***<u>արդարացվում է տնտեսական տեսանկյունից:</u>*** Անհամեմատ էժան է հիմնել և պահել համատեղ ուսուցմամբ, քան ստեղծել տարբեր խմբերի երեխաների համար մասնագիրացվող տարբեր տիպի դպրոցական համալիրներ:

Ներառական ուսուցումը ուղղված է խոչընդոտների վերացմանը և բոլոր երեխաների հիմնախնդիրները լուծելու ունակ ընդհանուր հանրակրթական դպրոցների ստեղծմանը: Դա միակ ճանապարհն է, որ տանում է դեպի բոլոր քաղաքացիների համար առավել արդար հասարակության կառուցմանը:

Ներառական կրթությունը կրթություն է բոլորի համար՝ անկախ ֆիզիկական կամ սոցիալական վիճակից, կրթություն ստանալու խոչընդոտներից:

Ներառական կրթությունը ենթադրում է բազմաթիվ փոփոխություններ, ինչպես դպրոցի ներսում, այնպես ել երկրի ամբողջ կրթական համակարգում, ապահովելով, որ յուրաքանչյուր երեխայի մուտքը դպրոց ողջունվի, դպրոցը լինի մատչելի, յուրաքանչյուր երեխա կրթությունից ստանա առավելագույնը, անգամ եթե նրա ունակությունները թույլ են կամ նա ժամանակին դուրս է մնացել կրթությունից:

Որպեսզի կրթությունը առավել ներառական լինի անհրաժեշտ է, որ փոխվի մարդկանց վերաբերմունքը, նրանց գործելաոճը, շրջակա միջավայրը, քաղաքականությունը, ռեսուրսների օգտագործման ու բաշխման մոտեցումները: Կրթության մեջ լիարժեք ներառման համար պետք է դիտարկվեն հինգ կարևոր ուղղություններ՝

1. ***միջավայրը.*** դպրոցի ներսում և դպրոցից դուրս միջավայրը իրապես մեծ ազդեցություն ունի թե որքանով երեխաները կարող են կամ ցանկանում են գնալ դպրոց: Այն վերաբերում է դպրոցի հարմարությանը, մատչելիությանը, գրավչությանը, մաքրությանը և այլն.
2. ***քաղաքականությունը.*** այն կանոնները որով կառավարվում է դպրոցը կամ ընդհանուր կրթական քաղաքականությունը կարող են նպաստել կամ արգելք հանդիսանալ բոլոր երեխաների ներառմանը.
3. ***գործելաոճը.*** դպրոցում տիրող փոխհարաբերությունները, դասավանդման և ուսուցման մոտեցումները նույնպես ազդում են երեխայի լիարժեք ներառման վրա.
4. ***ռեսուրսները.*** որոնց առկայությունը կարող է մեծապես նպաստել բոլոր երեխաների մասնակցությանը կրթական ծրագրին.
5. ***վերաբերմունքը.*** ուսուցիչների, ծնողների, երեխաների վերաբերմունքը կարող են կամ մեծ խոչընդոտ հանդիսանալ կրթության մեջ ներառմանը:

Ներառական կրթության գնահատմամբ զբաղվում է Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնը, որը ստեղծվել է 2007թ.-ին: Գնահատման կենտրոնի հիմնական գործառույթներն են կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթական կարիքի գնահարումը, նրանց զարգացման նպատակով հատուկ մանկավարժական, սոցիալ-հոգեբանական, վերականգնողական զարգացնող աշխատանքների կազմակերպումը, նրանց ծնողներին խորհրդատվության տրամադրումը, ծնողական կրթական դասընթացների կազմակերպումը:

Կենտրոնն իրականացնում է նաև շարունակական վերապատրաստումներ ինչպես իր մասնագետների, այնպես ել հատուկ կրթություն իրականացնող այլ հաստատությունների մասնագիտական թիմերի համար:

Գրականության ցանկ

Ներառական կրթության իրականացման ուղեցույց.

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ 2017թ.

Երեխաների իրավունքներին առնչվող ՀՀ օրենքների և ՀՀ այլ իրավական ակտերի ժողովածու, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան, 2005թ

Միավորված Ազգեր, 1989թ

Ժոմտյենյան դեկլարացիա 1990թ